ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.09.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/184

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Երամար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ս. Մեսրոպյանի (լիազորագիր՝ տրված 28.08.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 13.08.2020թ. թիվ 26/26-1/12054-2020 գրությամբ «Երամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 07.08.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/2460-2020 գրության հիման վրա, 13.08.2020թ. թիվ 26/26-1/12054-2020 գրությամբ նախաձեռնել է «Երամար» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Երամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երամար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/184 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 12:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է, որ Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51» ծածկագրով գնման ընթացակարգին: Հայտով ներկայացված տեխնիկական բնութագիրը լրացվել է թերի, անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո ներկայացրել են շտկված տեխնիկական բնութագիրը, սակայն բաց են թողել փաթեթավորման տեսակը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.08.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2460-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Երամար» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ընթացակարգի 16-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի, այսինքն բացակայում են հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող բազմաթիվ չափորոշիչներ:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 31.07.2020թ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և առաջարկել Մասնակցին շտկելու անհամապատասխանությունը: «Երամար» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում

ներկայացվել է Հավելված 1.1, որում ապրանքի տեխնիկական բնութագիրը 04.08.2020թ. գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պայմաններին չհամապատասխանող և վերջինիս հայտը մերժել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/184 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 12:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար իրային միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երամար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Երամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 16-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի, այսինքն՝ բացակայում են հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող բազմաթիվ չափորոշիչներ:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 31.07.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ «Երամար» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն

Հավելված 1.1-ում ապրանքի տեխնիկական բնութագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պայմաններին չհամապատասխանող և 04.08.2020թ. Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12054-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.08.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2460-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Երամար» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար իրային միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երամար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Երամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 16-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի, այսինքն՝ բացակայում են հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող բազմաթիվ չափորոշիչներ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով

մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 31.07.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ «Երամար» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն Հավելված 1.1-ում ապրանքի տեխնիկական բնութագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պայմաններին չհամապատասխանող և 04.08.2020թ. Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ներկայացված փաստաթուղթը, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում նախատեսված չի եղել Ընթացակարգի հրավերով տվյալ գնման առարկայի համար տեխնիկական բնութագրով սահմանված հետևյալ պահանջի վերաբերյալ տեղեկատվություն՝ «Փաթեթավորումը ստվարաթղթե տուփերով, մեկ տուփի մեջ մինչև 5 հատ, տուփերը պիտակավորված, պիտակի վրա նշելով

արտադրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անունը, մատակարար կազմակերպության անունը, արտադրման տարեթիվը»:

Ուստի վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ «Երամար» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում և առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 13.08.2020թ. թիվ 26/26-1/12054-2020 գրությամբ «Երամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Երամար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**